«ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀԿ-ԳՀԱՊՁԲ-20/04

ք.Երևան «30» 09 2020 թ.

«Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ-ն ի դեմս գլխավոր տնօրենի պարտականությունները կատարող **Գ.Ղազարյանի,** որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ **«Գնորդ»**, **մի կողմից,** և **«Տեխնոֆորում» ՍՊԸ-ն,** ի դեմս տնօրեն **Վ.Խաչատրյանի,** որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ **«Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:**

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի,

2.1.8 Չնեղել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է **335 160 ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:** Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

[18] *Եթե Վաճառողի կողմից գնային առաջարկը ներկայացվել է առանց ԱԱՀ-ի, ապա պայմանագիրը կնքելիս «ներառյալ ԱԱՀ-ն» բառերը հանվում են:*

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պարանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

4.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օրացուցային օրը: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել մատակարարված ապրանքի թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:[20]

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն այունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 3 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[21] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

---

[20] *Սույն կետը հանվում է պայմանագրի նախագծից, եթե գնվելիք ապրանքը չի հանդիսանում հիմնական միջոց: Իսկ եթե գնվելիք ապրանքը հանդիսանում է հիմնական միջոց, ապա երաշխիքային ժամկետը չպետք է պակաս լինի 365 օրացուցային օրից*

[21] *Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:*
Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով.

1) Վաճառողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին

ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է 17 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
«Հաշվարկային Կենտրոն» ՓԲԸ	«Տեխնոֆորում» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Աբովյան 27	ՀՀ, ք. Երևան, Աբեղյան 6/1, B303 տարածք
«Կոնվերս բանկ» ՓԲԸ	«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1930000600150100	Հ/Հ 1570026273290100
ՀՎՀՀ 01544167	ՀՎՀՀ 01253291
Գ. Ղազարյան _____	Վ. Խաչատրյան _____
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
ՀԿ-ԳՀԱՊՁԲ-20/04 ծածկագրով
գնանշման հարցման հրավերի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի											
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	ապրանքային նշանը, մակիշը և արտադրողի անվանումը **	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատակարարման		
									հասցեն	ենթակա քանակը	Ժամկետը***
1	48761100	«Վերջնական կետերի հակավիրուսային պաշտպանության» ծրագիր	Symantec Endpoint, Subscription License, 1Y	Հավելված 1.1	փաթեթ	335160	335160	1	ՀՀ, ք.Երևան, Աբովյան 27, 3-րդ հարկ, «Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ	1	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրվա ընթացքում

ԳՆՈՐԴ

«Հաշվարկային Կենտրոն» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, Աբովյան 27
«Կոնվերս բանկ» ՓԲԸ
Հ/Հ 1930000600150100
ՀՎՀՀ 01544167

Գ. Ղազարյան _____

Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

«Տեխնոֆորում» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Արելյան 6/1, B303 տարածք
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570026273290100
ՀՎՀՀ 01253291

Վ. Խաչատրյան _____

Կ.Տ

Հավելված N 2
ՀԿ-ԳՀԱՊՁԲ-20/04 ծածկագրով
գնանշման հարցման հրավերի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ապրանքի															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020-2021թթ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում												
			Հոկտեմբեր 2020թ.	Նոյեմբեր 2020թ.	Դեկտեմբեր 2020թ.	Հունվար 2021թ.	Փետրվար 2021թ.	Մարտ 2021թ.	Ապրիլ 2021թ.	Մայիս 2021թ.	Հունիս 2021թ.	հուլիս 2021թ.	Օգոստոս 2021թ.	Սեպտեմբեր 2021թ.	Ընդամենը
1	48761100	«Վերջնական կետերի հակավիրուսային պաշտպանության» ծրագիր	335160	335160	335160	335160	335160	335160	335160	335160	335160	335160	335160	335160	335160

ԳՆՈՐԴ

«Հաշվարկային Կենտրոն» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, Աբովյան 27
«Կոնվերս բանկ» ՓԲԸ
Հ/Հ 1930000600150100
ՀՎՀՀ 01544167

Գ. Ղազարյան _____

Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

«Տեխնոֆորում» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Արելյան 6/1, B303 տարածք
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570026273290100
ՀՎՀՀ 01253291

Վ. Հովսեփյան _____

Կ.Տ

Հավելված N 1.1
ՀԿ-ԳՀԱՊՁԲ-20/04 ծածկագրով
գնանշման հարցման հրավերի

«Վերջնական կետերի հակավիրուսային պաշտպանության» ծրագրի գնման տեխնիկական նկարագիր

Զ/Բ	անվանումը		տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	քանակը	մատակարարման վայրը	մատակարարման ժամկետը
1.	«Վերջնական կետերի հակավիրուսային պաշտպանության» ծրագրի		Բաղկացած է վեց հիմնական հանգույցներից և ծրագրերից	հատ	30	ՀՀ, ք.Երևան, Աբովյան 27, 3-րդ հարկ, «Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրվա ընթացքում
	1.	Թարմացում, կառավարում և հաշվետվություն					
	1.1	**Համակարգի կենտրոնացված կառավարում**	• Կենտրոնացված կառավարում մեկ կոնսոլից աշխարհագրորեն ցրված կայքերի համար՝ կլայենտների(customer) տարբեր խմբեր ստեղծելու և կլայենտների(customer) խմբերին իրենց սեփական քաղաքականությունը վերագրելու հնարավորությամբ: • Բազմաթիվ ադմինիստրատորների կառավարման վահանակի մուտքի տրամադրում և յուրաքանչյուր ադմինիստրատորի համար մուտքի մակարդակի և կլայենտների(customer) խմբերի սահմանում, որոնց նա կարող է կառավարել: • Զանգվածային վարակների հայտնաբերում և ադմինիստրատորների ծանուցում: • Ինտեգրում Active Directory- ի հետ: • Ստեղծել լրացուցիչ տարածք կլայենտի(customer) խմբի համար՝ հիմնվելով տարբեր պարամետրերի վրա, ներառյալ օգտագործված ցանցային կապի տեսակը, անլար կապի ID- ն, տիրույթի անունների թույլատրումը IP- ին և այլն, և նշանակել սեփական քաղաքականություն լրացուցիչ տեղակայման համար:				
	1.2	**Կլայենտի կողմից թարմացման կառավարում**	• Կառավարման սերվերում թարմացումները ներբեռնելու և դրանք կլայենտներին(customer) բաժանելու ժամանակն ու ժամանակահատվածը սահմանելու հնարավորություն:				

			• Հեռավար կայքերում կլայենտների(customer) համար բովանդակության բաշխման կետ (թարմացման գործիքներ) նշանակելու հնարավորություն՝ թարմացումների բաշխումն օպտիմալացնելու համար: • Շարժական կլայենտների(customer) համար (նոութբուքեր), որոնք կորպորատիվ ցանցից դուրս են, ուղղակիորեն թույլատրել վաճառողի կայքի բովանդակության թարմացումները:				
	1.3	**Կլայենտի կողմից պաշտպանություն**	• Կլայենտին(customer) ջնջելու կամ բեռնաթափելու համար գաղտնաբառի քաղաքականություն սահմանելը: • Կլայենտի(customer) պաշտպանություն չարտոնված ընդհատումից: • Կլայենտի(customer) կազմաձևի ամբողջականության պաշտպանություն:				
	1.4	**Կլայենտի կողմի տեղադրում և կառավարում**	Տեղադրում: • Կլայենտի(customer) տեղադրումից կամ տեղահանելուց հետո համակարգիչը վերագործարկելու անհրաժեշտության բացակայություն: • Կլայենտի(customer) «լուռ» տեղադրման հնարավորություն: • Կլայենտի(customer) բաշխման հավաքածուի ստեղծում՝ նշված պարամետրերով (կլայենտին տեղափոխել նշված խումբ, սկանավորել տեղադրման ընթացքում և այլն): • Ապրանքի նոր տարբերակին անցնելը և փաթչ տեղադրումը պետք է տեղի ունենա օգտագործողների համար անտեսանելի ռեժիմով, այսինքն՝ առանց ծանուցումների և վերբեռնումների: • Առանց հակավիրուսների համակարգիչների հայտնաբերում: Վերահսկում: • Կախված համակարգչի ծանրաբեռնվածությունից՝ սկանավորման գրաֆիկի, գործարկման պայմանների կարգավորումների հնարավորություն: • Բացառություններ (ֆայլեր, գրացուցակներ, ծրագրեր) ավելացնելու հնարավորություն:				

	1.5	**ՀՎՊ մոդուլի ֆունկցիոնալությունը կարգավորելու ունակություն**	Հնացած կամ թույլ համակարգիչների համար «թեթև» կլայենտի(customer) տարբերակի առկայություն և լրացուցիչ ֆունկցիոնալ մոդուլներ անջատելու հնարավորություն՝ ՀՎՊ մոդուլի շահագործումն օպտիմալացնելու համար:				
	1.6	**Սպառված ռեսուրսների օպտիմալացման հնարավորություն**	Նվազեցնել պրոցեսորի և մուտքի / ելքի ընդհանուր սպառման ծավալը՝ բացառելով սկանավորման «տեղեկատու» ֆայլերի և սկանավորված ֆայլերի ընդհանուր քեշի օգտագործումը				
	2.	**Սարքերի օգտագործման վերահսկում**					
	2.1	**Սարքերի օգտագործման սահմանափակման ֆունկցիոնալությունը**	Սարքերի օգտագործման սահմանափակում՝ ըստ սարքի դասի կամ նույնացուցիչի				
	2.2	**USB-ի հասանելիության սահմանափակման մակարդակները**	Մուտքը արգելափակված է, մուտք միայն կարդալու, կարդալու և խմբագրելու, USB կրիչից հավելվածներ գործարկելու համար				
	2.3	**Ըստ ցուցակների USB սարքերով կենտրոնացված կառավարելու հնարավորություն**	«USB սարքերի սպիտակ ցուցակի» կենտրոնացված սպասարկում				
	3.	Պաշտպանություն վիրուսներից և այլ սպառնալիքներից					
	3.1	Պաշտպանություն վիրուսներից	Վնասակար ծրագրային ապահովման հայտնաբերման և հեռացման բարձր ցուցանիշ: Պաշտպանական տեխնոլոգիաների օգտագործումը • Համաշխարհային ինտելեկտուալ ցանցի տվյալների հիման վրա հեղինակության վերլուծություն • Պարբերաբար թարմացվող բովանդակության հիման վրա ստորագրությունների վերլուծություն • Մեքենայացված ուսուցման տվյալների հիման վրա վերլուծություն • Էմուլատոր, որը հայտնաբերում է վնասակար ծրագրային ապահովում, որի կոդը թաքցնում են փաթեթավորողները • Կեղծ դրական արդյունքների նվազագույնի հասցնելու ծրագրերի վարքային վերլուծություն՝ չարամիտ և օրինական գործողությունների գնահատման ճանապարհով • Հիշողության շահագործման պաշտպանություն				
	4.	**Մատենագրում**					

	4.1	**Իրադարձությունների գրանցումն ըստ տեսակների**	Իրադարձությունների տեսակները: • Վնասակար ծրագրերի հայտնաբերման փաստեր (հաջող կամ անհաջող բուժման նշանով, վիրուսի անվանումը և դրա տեղադրման ամբողջական ուղին, ՀՎՊ տվյալների բազաների տարբերակը) • Համակարգի թարմացման փաստեր (նշելով հաջողությունը / ձախողումը, պատճառները, ՀՎՊ տվյալների բազաների ընթացիկ տարբերակը և միջուկի տարբերակը) • ՀՎՊ համակարգի և ամբողջ համակարգի առանձին մոդուլների միացման / անջատման փաստեր (նշելով, թե որ մոդուլներն են միացված / անջատված)				
	4.2	**Մատենագրման պարամետրեր**	Նվազագույն տեղեկատվություն իրադարձություններում: • Իրադարձության ամսաթիվը / ժամանակը • Անվանում • Իրադարձության նկարագրում • Համակարգչի IP հասցեն, որի վրա տեղի է ունեցել իրադարձությունը • Համակարգչի անվանումը • Համակարգչի մոտ աշխատող օգտատիրոջ անունը • Լրացուցիչ տեղեկություն				
	4.3	Իրադարձությունների գրանցումն ըստ տեսակների	Իրադարձության տեսակները: • Համակարգի լրացուցիչ մոդուլների կանոնների մշակման փաստեր (Firewall, IPS: կանոնի անվանումը, հասցեն և աղբյուրի նպատակակետ/անվնումը) • USB կրիչներ օգտագործելու փորձերի փաստեր (հաջող / անհաջող, ո՞ր կրիչը և ի՞նչ տվյալներ են գրվել / կարդացել)				
	5.	**Պաշտպանության լրացուցիչ մոդուլներ**					
	5.1	**Firewall(հրապատ)ի մոդուլ**	Կենտրոնականորեն վերահսկվող SPI- հրապատ, որը թույլ է տալիս սահմանել կարգավորումներ համակարգիչների տարբեր խմբերի համար՝ գործառնական ռեժիմների ընտրության հնարավորությամբ. • արգելափակել այն ամենը, ինչը չի թույլատրվում • արգելափակել արգելվածը • մատյանում այն փաթեթների գրանցում, որոնք ենթարկվում են կանոններին				
	5.2	**IPS մոդուլ**	• Կենտրոնացված կառավարվող IPS մոդուլ՝ որը հիմնված է թարմացվող				

			ստորագրությունների վրա և օժտված է կանոնները միացնելու / անջատելու հնարավորությամբ: • Սեփական IPS ստորագրության ստեղծում՝ օգտագործելով SNORT- ի նման լեզու: • IPS- ն պետք է վերահսկի մուտքային և ելքային կապերը:				
	5.3	Հավելվածների **վերահսկում**	• Հավելվածների վերահսկման կենտրոնականորեն կառավարվող մոդուլը, որը թույլ է տալիս վերահսկել գործընթացները ֆայլերի, ռեգիստրի հասանելիության մակարդակում, այլ գործընթացների գործարկումը և դադարեցումը և DLP բեռնումը: • Հավելվածների վերահսկման պատրաստի կանոնների առկայություն՝ հայտնի վնասակար կամ պոտենցիալ վտանգավոր վարքագիծը արգելափակելու համար: • Հավելվածների վերահսկման սեփական կանոնները ստեղծելու հնարավորություն:				
	5.4	**Ամբողջականության վերահսկում**	• Կենտրոնականորեն կառավարվող ամբողջականության վերահսկման մոդուլը • Հակավիրուսային ամբողջականության վերահսկում • Պատրաստի կաղապարների հիման վրա ՕՀ- ի և հավելվածների կազմաձևման պարամետրերի վերահսկում • ՕՀ-ի և հավելվածների կամայական կազմաձևման պարամետրերի ամբողջականության վերահսկում: • Հավելվածների «սեւ» և «սպիտակ» ցուցակների ստեղծում: • Ինտեգրում ցանցի անվտանգության դարպասների հետ `բաց REST API- ի միջոցով հավելվածների սեւ ցուցակը թարմացնելու համար: • Հավելվածների համար բացառություններ ստեղծելու հնարավորություն, որոնք կկատարվեն ցնկացած դեպքում, այդ թվում `թվային ստորագրության հիման վրա:				
	5.5	**ԾԱ վնասակար ծուղակներ**	• Վնասակար ծրագրերի համար պատրաստի թակարդներ օգտագործելու հնարավորություն: • Վնասակար ծրագրերի համար սեփական թակարդներ ստեղծելու հնարավորություն:				
	6. **Լրացուցիչ ընտրանքներ**						

	6.1	**Ծրագրերի մեկուսացում**	Հակավիրուսային գործիքի միջոցով Windows- ի աշխատանքային կայաններում հավելվածների մեկուսացման տեխնոլոգիա կիրառելու հնարավորություն:				
	6.2	**ՕՀ-ի կարծրացում**	Հակավիրուսային գործիքի օգտագործմամբ Windows- ի կայաններում ՕՀ-ի կարծրացման տեխնոլոգիա կիրառելու հնարավորություն:				
	6.3	**EDR**	Հակավիրուսային գործիքի միջոցով Windows- ի կայաններում և սերվերներում (Վերջնակետի հայտնաբերում և արձագանքում) EDR տեխնոլոգիա կիրառելու հնարավորություն:				

* Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը պետք է ներկայացնի նաև առաջարկվող ապրանքային նշանի, արտադրողի, ծագման երկրի վերաբերյալ տեղեկատվություն

ԳՆՈՐԴ

«Հաշվարկային Կենտրոն» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, Աբովյան 27
«Կոնվերս բանկ» ՓԲԸ
Հ/Հ 1930000600150100
ՀՎՀՀ 01544167

Գ. Ղազարյան _____

Գ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

«Տեխնոֆորում» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Աբեղյան 6/1, Բ303 տարածք
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570026273290100
ՀՎՀՀ 01253291

Վ. Խաչատրյան _____

Վ.Տ